

ՍԵՐՈԲԵՆՑ ԱԾԵԲԼ*)

I

Փոքր չէր Սերոբենց ընտանիքը. ութ հոգի էին ապրում նրանց աղքատիկ խրճիթի սեացած յարկի տակ—մի հայր, մի մայր ու վեց աղջիկ. Հեշտ բան չի գիւղացի մարդու համար ութ քաղցած ըերան կերակրելը, ութ մերկ մարմին հագցնելը, մանաւանդ որ Սերոբը ստիպուած էր մենամենակ քաշելու ընտանեկան լուծը:

«Այս, Աստուած, ինչ կը լինէր, որ մի հատիկ եղբայր էլ ես ունենալի. ինչդ կը պակսէր, որ մի երկու տղայ էլ ինձ տայիր»—ասում էր նա շատ անդամ աշխատանիքի ծանր ժամանակ:

Ասենք, Սերոբը հէնց մանկութիւնից ձախորդութեան սառը գրկումն էր մեծացել: Դեռ տասը տարեկան էր նա, երբ անողոք տիֆլ ներս սողաց նրանց շէմքից, մի ամսուայ ընթացքում հանգցրեց պայծառ օջաղը ու ջնջեց բազմանդամ ընտանիքը, ենթարկելով փոքրիկ Սերոբին ճակատագրի հաճոյքին: Անօգնական որբի շուրջը հանդէս եկան ինչ որ բարեհոգի իննամականեր, որոնք հետզհետէ հալեցին ու կուլ տուին նրա հայրենական ժառանգութիւնը, թողնելով միայն մի խարխուլ խրճիթ, իսկ Սերոբին՝ վարձքի համար վերցրին իրանց մօտ հացափոր ծառայելու:

Որբի քաշած օր ու արեն ինչ պիտի լինի: Շոբիկ

*) Արարատիան դաշտի հայ գիւղերում խաղողի դեռահաս վաղներով նորատունկ ալղին անուանում է ածեր:

ստով, կեղաստ շորով ու բաց կրծքով օրն ի բուն աշխատում, չարչարւում, ազր ու ցեխի մէջ խոնարհ ծառայութիւն էր անում տարաբախտ փոքրիկը և այդ բոլորի փոխարէն մի ճոխ ցամաք հաց էր միայն ստանում, իր միշտ, միշտ քաղցած ստամբուխն բաւականութիւն տալու համար: Այդ ժամանակն էր, որ Սերոբի սրախօս ընկերները դրոշմեցին նրա ճակատին Սովոր մականունը, որը և առմիշտ կապուած մնաց նրա տնուան հետ:

Անցան այդպէս մի քանի տարիներ: Վերջապէս նա կամաց կամաց խելքի հասաւ, թողեց իր «բարեհոգի» խնամակալներին և վարձով ծառայութեան մտաւ մի ունեոր ու ասսուածավախ դիւզացու մօտ: Որպէս աշխատաւոր, Սերոբը աննման էր. նրա բազուկների ոյժը, անխոնջ ջանասիրութիւնն ու անսահման հաւատարմութիւնը կատարելապէս հիացրին բարեպաշտ տանտիրոջը, որը իր հոգու վարձքի համար վճռեց Սերոբնց քանդուած օջաղը վերահաստատել ու պայծառացնել: Բարի ծերունին մի լաւ հարսնացու ընտրեց, իր հաշուով Սերոբին ամուսնացրեց, բացի դրանից մի թեթև տան սարք ու մի արտատեղ ընծայեց և օրհնելով արձակեց, որ ինքնագլուխ ու ազատ աշխատի:

Այդ օրուանից Սերոբը ոտք դրեց իր հայրենական տունը և կիսաւեր խրճիթի մի պատի տակ կծկուելով, սկսեց ըերանի գոլով տաքացնել նրա սառն անկիւնները երկարատև ծառայութեամբ հաւաքած ու կոպէկները իրար վրայ կիտուելով, մեծացել, շատացել ու քառասուն ոռուբլու չափ մի խոշոր գումար էին կազմել: Սեփական ընտանիքի, տուն ու տեղի տէր գառնալով, Սերոբը իր խնայած ամբողջ գումարով մի լաւ ձի առաւ ու սկսեց ըեռնակրութեամբ պարապել: Ո՞րքան քաղցր, ո՞րքան հաճելի էր թւում սեփական աշխատանքի կարուտ Սերոբին այդ տաժանելի պարապունքը, որով նա օրէն ապրուստ էր վաստակում ու պապենական խորտակուած օջաղը կամաց կամաց կարգի ըերում:

Շուտով նորածին մանուկի հմայիչ ճիչը քաղցր հընշիւններով տարածուեց նրանց անհրապոյր խրճիթի ցուրտ անկիւններում։ Խանդարուած օջաղը կամաց կամաց տաքացաւ ու աթարի դառը ծուխը նրա երգկից բուլա բուլա բարձրանալով, ամպերի հետ խառնուեց։

Բայց փուչ աշխարհի ոչ մի անկիւնում երջանկութիւնը անվերջ չի լինում։ Սերոբենց ընտանիքի այս բախտաւոր դրութիւնն էլ երկար չը տևեց. նրանց օջաղի ամրապինդ սիւնը, Սերոբի թե ու թիկունքը—հաւատարիմ ձին մի օր անսպասելի կերպով հիւանդացաւ ու վեր ընկաւ։ Խեղճ կենդանին շատ չարչարուեց, դէռդէն ընկաւ ու գալարուեց, տնքաց, տնքաց, երեք անգամ հոգեց քաշեց ու անշնչացաւ...

Անողոք ճակատագրի այս սարսափելի հարուածը հիմքից ցնցեց տարաբախտ ընտանիքի կարճատև բարօրութիւնը, յուսահատութեան ու վշտի մէջ թաղելով խեղճ ամսւաններին։ Սյդ գժբախտ դէպքից երեք օր անցած, երկրորդ աղջիկը լոյս աշխարհ եկաւ։

Սերոբի սիրտը սեւացաւ, ծիծաղն երեսից փախաւ ու ծանր վիշտը մի երկու հատ բարակ ակօս քաշեց նրա լայն ճակատի հարթ մակերեսոյթի վրայ։ Դառաւ մնայլ, գիւրագրդիս, բարկացկոտ, և որ ամենից սարսափելին էր, սկսեց խմել։ Նիհար գրպանի անկիւններում մնացած սև կոպէկները անխնայաբար վատնուում էին գինետան գարշելի մթնոլորտում։ Սպիրաի կորլստարեր թոյնը, թմրացնելով ուզեղն ու անզդայացնելով սիրտը, ազատում էր Սերոբին սրտամաշ վշտի սուր ճիրաններից։

Վերջապէս Սերոբի գրպանը գատարկուեց և գինետան դուռը նրա անփող քսակի առջև փակուեց. նամարդ ընկերներն էլ երես թեքեցին ու նա ստիպուած եղաւ այնուհետեւ միայնակ տանը նստել։ Յուսահատութիւնն այնպէս տիրել էր նրան, որ ձեռը բան չէր բըռնում ու բերանը խօսը չէր գալիս։ Աստուած այնքան էր ողորմացել նրա խեղճ ընտանիքին, որ ոչ աշնան

պատրաստած ընադունի ալիւրն էր վերջացել և ոչ հացի տաշտն էր գատարկուել, թէ չէ, վայն եկել էր ու նրա մանր երեխաներին տարել:

Անցան մի քանի թունալից օրեր գառը մտատանցութեան ու հոգեմաշ վշտերի մէջ։ Ոչ մի ժամանակ Սերոբը այնքան մենակ ու անօդնական չէր զգացել իրան, որքան հիմա։ Երբէք նրա հոգին այս աստիճան չէր կարօտել մի խրախուսող բարեկամի, մի բաջալերող խրատի։

Վերջապէս մի առաւօտ Սերոբենց գուռը բացուեց ու ներս մտաւ քեռի Գոգորը, բարձրահասակ ու լայնաթիկունը մի ծերուկ։ Տանտէրը իր թուլացած մէջը սիւնին դէմ տուած ու ձեռները ըներակներին սեղմած, դառը մտքերի ծովն էր ընկղմուած։ իսկ տանտիկինը հիւանդ էր ու անկողնու մէջ պառկած։

—Բարի լոյս, քըւոր որդի, օֆ-օֆ, —ասաց բարի ծերունին պատկառելի հանդարտութեամբ առաջ գալով ու տէրողորմեայի սկ հատիկները մեղմութեամբ համարելով։

—Ասածու բանին, —քեռի Գոգոր, մի տեսակ գըժկամութեամբ պատասխանեց Սերոբը, տեղից կանգնելով ու թափածալից աչքերը նորեկի վրայ ուզգելով, —համեցիլ նստիր։

Քեռի Գոգորը առանց շտապելու տեղաւորուեց սիւնի առջև փոած հնամաշ թաղիքի վրայ ու բռնութամանը գրանից հանելով՝ ասաց։

—Ի՞նչ կայ, քըւոր որդի, ինչու ես էղպէս ախուր։

—Է՛հ, ինչ ասեմ, քեռի Գոգոր, Ասառւած գլխիսքար գցեց, տունս քանդուեց, ձիս սատկեց... իսեղդուած ձայնով պատասխանեց Սերոբը ու ցուցամատով սրբեց այտի վրայով ցած գլորուող արտասուքի կաթիլը։

—Է՛հ, վեաս զունի, որդի, վառք իրան, դա մի թեթև անաջողութիւն է, գիմացիր, սիրտ լայն պահիր. դու գեռ ջահէլ ես ու առողջ, մի յուսահատուիր։

—Ասում ես մի յուսահատուիր, քեռի Գոգոր, ախր

ի՞նչպէս չը յուսահատուեմ։ ԶԷ որ մեր ամբողջ ընտառիքը էն ձիու երեսին էր մտիկ անում ու նրա աշխատանքով ապրում։

—Հասկանում եմ, Սերոբ ջան, ես հասկանում եմ քո նեղ դրութիւնը, տեսնում եմ ցաւիդ մեծութիւնը, բայց էլի ասում եմ, որ ախ ու վախը դարդիդ դարձան չի անիլ. օֆ-օֆ, էս էրուած ու կրակուած ջանը քեզ համար կենդանի օրինակ,—ասաց քեռի Գոգորը, աջ ձեռով ամուր խփելով իր դարդոտ կրծքի չոր ոսկորներին։

—Հապա ի՞նչ անեմ, քեռի Գոգոր, ասա, սովորեցրհւ, հօրդ հոգին լոյս դառնայ. դու մեծ մարդ ես, դու փորձուած ես. քո գլխովդ շատ շար ու բարի է անցել. մի խելք դիր իմ գլուխս, ոտք պաշեմ, մի ճամբայ ցոյց տուր այս սարսափելի դրութիւնից դուրս դալու, թէ չէ, շուտով ես կը խեղդուեմ մտքերի ծոփում, ես կը ցնդուեմ կսկծի ձեռից...

—Կը գժուես, այո, կը գժուես, որդիւ ԱՌի, ձախորդութիւնն ամեն բան կ'անի. օֆ-օֆ,—վերջացրեց ծերուկը ու խորը հառաչելով, մի պտղունց վերցրեց կծու բռնոթու բուժարար փոշուց։

—Քեռի Գոգոր, Աստուած սիրես, ինձ ազատիր, վիշտը ուտում է սիրտս ու մաշում հոգիս, ասա, ի՞նչպէս ազատուեմ ես նրա ձեռից. ուրի փախչեմ; ի՞նչ անեմ։

—Ի՞նչ անես. այ ասեմ, որդիս, տեղիցդ վեր կաց, բահդ դիր ուտիդ ու ինձ հետ արի,—ամեն մի նախադասութեան վրայ առանձին շեշտելով արտասանեց քեռի Գոգորը ու պտղունցում մնացած բռնոթու կիսատը քաշելով, բեխերը սրբեց, մօրուքը շփեց ու տեղից կանգնեց։

—Որի, որդի,—շարունակեց նա դէպի դուռը դիմելով, —արի գնանք աշխատելու։ Օրհնուած աշխատանքը կը փարատի հոգուդ թախիծը ու հալալ քըրտինքը կը լուանայ սրտիդ դառնութիւնը։

Եւ Սերոբը բահն ուսեց ու լուռ հնազանդութեամբ քեռի Գոգորին հետեւց:

II

Քեռի Գոգորն էլ անիրաւ բախտի խորթ զաւակներից մէկն էր: Նրա ծերացած սրտի հեռաւոր խորըում թաղուած էր մի անմոռաց վիշտ: Լուսահոգի Շուշանի, իր պաշտելի ամուսնու, անմոռանալի յիշատակն էր դա:

Քեռի Գոգորը վերին աստիճանի ջերմեռանդ քրիստոնեայ էր ու մոլի ծիսապաշտ: Զը կար նրա երկարատև կեանքում մի օր, որ նա ժամանացութեան ներկայ չը լինէր, և ոչ ոք չէր յիշում մի գէպք, երբ նա որեւէ պատճառով պասը լուծած լինէր: Ամեն օր, բարիլսյը բացուելուս՝ առաջին անգամ նա էր մօտենում ժամի գուան սև խաչքարին ու խորին երկիւղածութեամբ համբուրելով, ջերմեռանդութեամբ ազօթում, մինչև տէրտէրի գալը: Յետոյ նա եկեղեցի էր մտնում և ձախակողմեան դասում բռնում էր պատուաւոր տեղը: Իրիկուն-առաւոտ ամենայն ծշտապահութեամբ եկեղեցի յաճախելով, նա վազուց ի վեր անդիր էր արել բոլոր շարականները, մաղթանքները, փոխերը, նոյն խակ Աստուածաշնչի մեծ մասը: Մէջքը ժամի սիւնին յենած, և աշըբերը Տիրամօր իւղաներկ պատկերին յառած, նա կիսաձայն մրմնիցում էր ամբողջ ժամասացութիւնը մի ծայրից մինչև միւսը և այդ բանը նա սիրում էր անել այնպէս, որ ամեն մի ազօթքի սկզբի նախագասութեան առաջին բառերը ամենից շուտ նրա ջերմեռանդ շրթունքներից էին գուրս թռչում, որից յետոյ կրկնում էին տէրտէրը կամ տիրացուն:

Նրան ամենքը սիրում էին դեռ երիասարդութիւնից, երբ նա «օՓ»-երով չէր տակնուվրայ անում ունկնդիրների սիրտը, այլ իր քաղցրահնչիւն ձայնի մելամաղձոտ ելեէներով էր շարժում նրանց սրտի ամե-

Նաքնքոյշ լարերը։ Այդ ժամանակ նա դեռ տիրացու Գրիգոր էր և ամբողջ ժողովրդի միաձայն հաւանութեամբ ընտրուած տէրտէրացու։

Բայց ճակատագիրը այլ կերպ էր տնօրինել։ Տիրացու Գրիգորին վիճակուած չէր տէրտէրական սև փարաջայ հազնելլ։ Հէնց այն օրերում, երբ սպասուում էր ձեռնադրութեան հրամանը, նրա կինը, գեղեցիկ Շուշանը, ժորերի բորբոքում ստացաւ ու մի քանի օրից յետոյ վախճանուեց...

Շուշանի մահից յետոյ անցան երեսուն երկար տարիներ։ Ժամանակի աւելիչ ոյժը մզեց նրա բազուկների զօրութիւնը, հանդցրեց բոցավառ աչքերի կրակը, բայց չը կարողացաւ սառցնել գունատ շրթունքների ջերմ աղօթքը ու կարճացնել անճարին մեկնած օդնական ձեռքը։

Քեռի Գոգորը ուշի ուշով դիտում էր իրան շըրջապատող խեղճութիւնը և կարեկից հայեացքով հետեւում էր աղքատ հարևանների տանջալի կեանքին, և հէնց որ նկատում էր, թէ նրանցից մէկը մնացել է անօդնական, խսկոյն վազում էր այն կողմը, բռնում էր նրա արօրի մաճը, ցանում էր արտը, ջրում էր այգին, թաղում էր թուփը, մի խօսքով կարեկից եղբայր էր հանդիսանում։

III

Սերոբն էլ շատ նեղ տեղումն էր, յուսահատութեամբ ու վշտով լցուած էր նրա խարիսուլ խրճիթը, ուստի քեռի Գոգորը իր ոտը ներս դրեց այնտեղ։

Դարմանային առաւօտ էր երկար ժամանակ գընում էին նրանք ծաղկազարդ ծառերով հովանաւորուած այգիների քարքարոտ ու ծուռտիկ ճանապարհով, մինչև որ հասան Սերոբենց այն հողաբաժնին, որը նրան վարձը համար ընծայել էր իր նախկին աստուածավախ բարերարը։ Այդ հողի գլխին բարի ծերունին կանգ

առաւ, նստեց նորածիլ դալար կանաչի վրայ, կորացած մէջը բարդի ծառին յենեց, —մի զոյգ ծորալի «օֆ»-եր արձակեց ու բռնօթամննը գրպանից հանեց:

—Նստիր, Սերոբ ջան, նստիր մի քիչ հանգստա- նանք, —դիմեց նա կողքին կանգնող երիտասարդին:

Վերջինս իր ուսի սուր բահը փափուկ հողումը տնկեց ու քեռի Գոգորի ստների մօտ նստեց:

—Ես հողը քոնն է, կարծեմ, ըըւոր որդի:

—Իմն է, քեռի ջան, լուսահոգի Թաթոս ամօւ ըն- ծայածն է:

—Աստուած հոգին լուսաւորի. քանի տարի է, ինչ քո ձեռքիդ է:

—Եը լինի վեց տարի:

—Հապա ինչու ես ծուլութիւն արել. ինչու այս- քան ժամանակ այգի չես գցել. տեսնում ես, չորս կողմղ բոլորը տնկած է:

—Եէէ, քեռի Գոգոր, ինչ ես կորցրել ու ինչի ես ման գալի: Այդի տնկել լաւ ես ասում, լաւ երազ է, եթէ բարին կատարի: Բայց ով է տուել մեղաւորին ար- քայութիւն: Էստեղ իմ մէջքս կոտրուել, իմ սիրոս փո- րումն աւացել է, գու էլ ասում ես այգի տնկէիր. կ'ասես էրամենց տղերանց պէս վեց աժդահայ ախպէր ունեմ յետևիս կանգնած:

—Սերոբ ջան, դիմես ինչ կայ, —ասաց Գոգորը պըտ- զնյումմացած բռնօթու կիսատը բաշելով, —ձիգ սատկեց

—Քսաս չունի, մենակ աշխատիր: Դու դեռ երիտասարդ- ես և ուժեղ, ու քեզ պէս առողջ տղամարդի համար դժուար չէ մի փոքրիկ դերդաստուն կերակրելը: Բայց օտարների դաներին աշխատելով, դու միենոյն ժամա- նակ չը պիտի մոռանաս, որ առջեղ կայ ծերութիւն, կայ հիւանդութիւն և հազար ու մի տեսակ ձախորդու- թիւն, երբ այդ բազուկներդ այլ ևս չեն կարող օրէն ապրուստ վաստակել: Առ այժմ մի հատ լաւ այգին այս հողի վրայ՝ բաւական կը լինէր քեզ համար: Ինչու չես տնկում, օգնական չունես: Այ, ես կը դառնամ քո մեծ

եղբայրը. թէև ծերութիւնն ու վիշտը մզել են բազուկներիս միջի գօրութիւնը, բայց էլի մնացած ոյժն էլ կարող է օգտակար լինել քեզ համար. Մի բան ասեմ, հանաք մի համարիր. արի հէնց այսօրուանից սկսենք այս հոգի ձեւել ու եկող ամսին անպատճառ մի տախտակ^{*}) տընկենք. մի ծիծաղիր. ես վստահ եմ, որ Աստծուն էլ հաճելի կը լինի մեր թափած քրտինքը:

Այդ խօսքերի հետ քեռի Գոգորը վեր կացաւ տեղից, գտակը ծառի ճղին դրեց, չուխէն հանեց, թաշկինակը դլուխը կապեց և Աստծու անունը տալով, բահը վերցրեց:

Սերոբը մնացել էր շուարած, տեղումը նստած. Այնքան անսպասելի էր այդ բանը նրա համար, որ չէր կարողանում աչքերին հաւատալ. Սոված-Սերոբ ու սեփական այդի. ինչքան տարբեր բաներ, որքան իրարից հեռու հասկացողութիւններ են: Եւ այն ամենը, ինչ որ այդ բողէին կատարում էր Սերոբի աչքի առջև, մի տեսակ հաճելի երազի տպաւորութիւն էր գործում:

Սուր բահը բեռի Գոգորի վարժ ձեռներում գործում էր աշողութեամբ: Խնաւ հողի սև կունծղերը երար վրայ դիզուելով ու հետզհետէ երկարելով մի բարալիկ թումբ կազմեցին, որի վրայ կաթկաթում էր ժրաշան ծերուկի կնճռոտ ճակատից հոսող քրտինքը:

Ծեր անդամները շուտ են վաստակում: Առաջին թումբը կապելուց յետոյ ալեսր բանուորը բահը գետնում ցցեց, կոշտացած ձեռով քրտինքը սրբեց ու բըռնոթի բաշելու պատրաստութիւն տեսաւ:

Սերոբը իր պէլացած աչքերի անթարթ հայեացքը ուղղել էր նրա վրայ և տեսողութեան բոլոր ոյժը լարել, ուղինալով որոշել՝ երազ է իր տեսածը, թէ ծշկրի:

— Վեր կաց, ըբւոր որդի, — քաղցրութեամբ ասաց բեռի Գոգորը, — գժուարութիւնն անցաւ. հիմքը դրուեց,

*) Խաղողի այգում եղած թումբերի ամեն մի շարքը առանձին առած՝ ասում է տախտակ:

աչքդ լոյս. այ, տեսնում ես, այգուդ առաջին թումբը
արդէն պատրաստ է:

Սերոբը սթափուեց: Ոչ, երազ չէր այս բոլորը: Ճիշտ
որ առաջին թումբը արդէն պատրաստ է. նրա զարման-
ցած աչքերը այժմ շատ լաւ են տեսնում այն սե-
կունծղերի երկար շարանը, որ ճանառի *) մէջքի պէս
դուրս է ցցուել դալար խոտերի միապաղաղ կանաչ մա-
կերեսյթից: Այս, այդու հիմքը արդէն դրուած է: Սե-
րոբի սիրաը թնդաց ուրախութիւնից. յանկարծ նա գժի
պէս վեր թռաւ նստած տեղից, անխօս վաղեց դէպի
ծերուկը, երկու ձեռով ամուր բռնեց նրա աջը ու ջղա-
ձգաբար մօտեցրեց իր այրուող շրթունքներին: Նա չերմ
համբոյրներ էր դրոշմում, նա լիզում էր այն հոգատար
ձեռը, որը նրա բարօրութեան հիմքն էր դնում, բախ-
տաւորութեան ճամբան էր ցոյց տալիս:

—Ա՛խ, քո Ստեղծողիդ մատաղ, քեռի ջան, էս ի՞նչ
լաւ բան սովորեցրիր ինձ,—բացականչեց Սերոբը, —ես
կ'աշխատեմ, կը չարչարուեմ, իմ քրտինքով կ'ողողեմ այս
ամբողջ հողը և եթէ Աստուած աջողի, մի լաւ այդի կը
կանաչացնեմ այս տեղում:

—Ուրեմն արի շարունակենք, ողորմած Աստուածը
ոյժ կը տայ մեր բազուկներին և կ'օրհնի մեր արդար
աշխատանքը, —ուրախութեան ժպիտը երեսին՝ ասաց
քեռի Գոգորը:

Սերոբը ծերունու ձեռից առաւ բահը ու մեծ ե-
ռանդով շարունակեց նրա սկսած գործը:

Այնուհետեւ մի ամբողջ ամիս Սերոբն ու Գոգորը
իրանց քրտինքով թրջում էին նորաբուս թումբերը,
մինչև որ կարողացան մի տախտակ գլխէգլուխ խաղողի
դալար մատներ տնկել ու կանաչացնել: Նորաբողը վազները
կազները իրանց զուարթ տեսրով միտիթարութիւն էին
պատճառում երկու աշխատաւորներին և կրկնակի եռանդ
ներշնչում նրանց:

*) ճանառը ձուկ է:

«Աշխատանքը կը փարատի հոգուդ թախիծը և բրտինքը կը լուանայ սրտիդ դառնութիւնը»—ամեն օր հաճութեամբ կրկնում էր Սերոբը քեռի Գոգորի իմաստուն խօսքերը։ Եւ իսկապէս, ձիու կորուստը շուտով մոռացուեց ու նրա սիրաը նորից բացուեց։ Թախիծը կորաւ, վիշտը հալուեց... Կամաց կամաց եղանի արտասուբներն էլ ցամաքեցին ու Սերոբենց խրճիթի սեացած յարկի տակ անէծքի ու հայհոյանքի փոխարէն նորից լսուեցին ուրախ ծիծաղի քաղցր հնչիւնները։

Անցան մի քանի տարիներ՝ Սերոբենց նախկին անմշակ հողի տեղ այժմ փոռւած էր մատաղ ծառերով շրջապատուած մի գեղեցիկ ածեր, որը ապագայ բարօրութեան բաղցր յօյսերով լցնում էր տիրոջ սիրաը։ և նա ոչ մի ջանք չէր խնայում՝ իր նորատունկ այգին ինչպէս կարգն է մշակելու։

«Վնաս չունի, չարչարուիր,—աշխատանքի ծանր բոպէներին ինքն իրան սիրտ էր տալիս Սերոբը,— շատը գնացել, քիչն է մնացել. մի երկու երեք տարի էլ ատամներից հուզ տուր ու աշխատիր և այնուհետեւ հանգստութեամբ վայելիր անինայ թափած դառը քըրտինքիդ քաղցր վաստակլը»։ Նա սկսում էր մտքում հաշուել թէ որբան խաղող կարող է տալ ամեն մի թուփը, ասկա ամեն թումբը, ամեն տախտակը և վերջապէս ամբողջ այգին, ու երբ նրա հաշուով տարեկան սպասուելիք արդիւնքը համնում էր հարիւրների, քիչ էր մնում նա խենթի պէս կանգնած տեղում թըռչկոտար ու բացականչէր. «Այս, երանի կը լինի էն օրը, այն ժամանակ էլ ինձ Սոված-Սերոբ չեն ասիլ»...

Վերջապէս հասաւ այդ երանելի ժամանակը։ Սերոբենց ածերը սկսել էր արդիւնք բերել, որը տարեկան մի քանի տասնեակ ռուբլիներից արդէն հասել էր մինչև հարիւրի. բայց դա դեռ բոլորը էր։ Այդին նոր էր

հասունանում։ Փարթամ վազների առողջ կուտրակները *) դեռ կատարելապէս չէին զարգացել. տարիների հետ զուգընթացաբար պիտի աւելանար նաև տուած արդիւնքը։ Մի խօսքով այդու վրայ ոռկէ յոյսեր շատ կային։ Եւ Սերոբը ուրախ էր։

Նա՝ իր կեանքի այս աջողակ տարիներում գանգատառելու մի հատիկ առիթ միայն ունէր, — արու զաւակի բացակութիւնն էր դա, որը սկսել էր արդէն լուրջ մտահոգութիւն պատճառել երկու ամսւակներին։ Հինգ անգամ յղութիւնից ազատուել էր եղսանը և վեց հատ աղջիկ էր բերել, վեցն էլ սիրուն, շէկ մաղերով, թուխ աշքերով. վեցն էլ կայտառ ու առողջ։

Պէտք է ասել, որ Սերոբի տնտեսական գրութիւնը հիմա բաւական լաւ էր։ Լաւ ասածը այն էր, որ հացը՝ տաշտից ու ցորենը՝ պարկից չէր պակասում։ Բացի գրանից նա ձեռք էր բերել մի կով, որի շնորհիւ առաջուայ կաթի կարօտ երեխաները կարողանում էին պասն ուտիսից զանազանել ու կուշտ փորով մածուն ուտել։ Էհ, ֆառք Աստուծոյ, էլ ինչ պիտի լինէր։ Զախորդ տարիներից մնացած մանր մունր պարտքերն էլ բոլորսվին մաքրել էր Սերոբը. այնպէս որ նրա փէշը քաշող, գուռը ծեծող չը կար այլ ևս։

Այժմ տների վերաշինութեան մասին էր մտածում Սերոբը։ Իր համեստ եկամուտից աւելացած կողէկները իրար վրայ հաւաքելով, նա մի փոքրիկ գումար էր կազմել, որով մտադիր էր առաջիկայ ամսուը պապենական բլբլոտած խրճիթի տեղ երկու սիրուն սենեակ շինել։

IV

«Լաւ, շատ լաւ, Սոված-Սերոբ. դու լաւ արիր, որ իմ ուղարկած խնամախօսին սեերես յետ դարձրիր, իմ

*) Կուտրակ անուանում է խաղողի թուփի ստորին հաստ մասը։

բարձր անունը գետնովը տուիր ու պատիւս հողի հետ
հաւասարեցրիւ»:

Մի իրիկուն այսպէս զայրացած խօսում էր Մուկի-
սոնց Մանուկը իր նորաշէն տան գեղեցիկ պատշգամ-
քում մենամենակ արագութեամբ շրջելով ու պապիրոսի
ծուխը ագահութեամբ ծծելով:

«Ես Մուխսու թռուը լինեմ, — շարունակեց նա հետ-
քիետ տաքանալով, — ուժ այդի ունենամ, վեց աչք
ջրաղաց, երեք ձեռք տուն, ու Սոված-Սերոբի պէս
մի շուն...»:

Նա մի բոպէ լոեց. տաքացած ճակատը ձեռով
տրորեց ու պապիրոսի ծուխը կուլ տալով, շարունակեց.

«Գիւղի մեծ մասը իմ՝ պարտքերի տակ տնքայ.
տարին տամներիու ամիս գաղած-աշխատածը իմ սըն-
դուկը լցնի, իմ անունը Մանուկ-աղայ լինի, կարողու-
թիւնս տամնեակ հաղարներով հաշւուի, և այս բոլորից
յետոյ Սոված-Սերոբի պէս մի էլ գիւղացի իմ ուղար-
կած ինամախոսին քարի^{*}), իր աղջիկը ինձ ըլ տայ,
թէ — երկու կին է թաղել...

Այս խօսքերի հետ նա մի կողմ շպրտեց պապիրո-
սի բոնթուկը ու ձեռները տրորերով ներս մտաւ կէս-
ասիական կէսեւրոպական ձեռվ կահաւորուած մի
փոքրիկ, բայց վայելուչ սենեակ, որտեղ տարածուած
էր կարտօֆիլի մոմի դուրեկան ու երկշոտ լոյսը:

Սենեակի պատուաւոր անկիւնում հպարտութեամբ
բազմել էր մի գեղեցիկ ու մեծ դրամարկի, որի մէջ
պահուում էին տանտիրոջ փողերն ու բազմաթիւ պար-
տամուրհակները:

Մանուկ-աղան բանալիքների մի մեծ կապուկ գըր-
պանից հանելով մօտեցաւ դրամարկի դիմացի անկիւ-
նում կանգնած պահարանին ու այնտեղից հանելով մի
շիշ արագ ու մի արծաթէ բաժակ գրեց լուսամուտի

*.) Աղջկատիրոջ կողմից ինամախոսին արտած մերժողական պա-
տասխանը ժողովրդական լիզուով ասում է քարել:

առջեւի կլոր սեղանի վրայ, յետոյ նաև կրկին մօտեցաւ պահարանին, հանեց այնտեղից մի ափսէով զուրգել, ու մէկը մրւսի յետևից կուլ տուեց մի քանի բաժակ թունդ արաղ, ամեն մի բաժակից յետոյ անուշ անելով թարմ զուրգելից մի համեղ կտոր։ Զորս-հինգ բաժակ լոռւթեամբ խմելուց յետոյ, Մանուկ-աղան հանեց շալ արխալուղի վրայից հագած մոխրագոյն պիգչակը և գցեց մօտիկ գրուած ու պարսկական թանկագին գորգով ծածկուած փափուկ տախտի վրայ. ապա նա վերցրեց բուխարական աղնիւ մորթուց կարած ու գդակը ու նոյն պէս շպրտեց տախտի վրայ ու քթի տակ մըրթմըրթալով, սկսեց թաշկինակով սրբել կնճոտած ճակատից կաթկաթող քրտինքը։

«Սոված շան-որդի, — շարունակեց Մանուկը ձեռները քամակին գրած արագութեամբ անցուգարձ անելով սենեակում, — դու էնքան սիրտ ունենաս, որ համարձակուես էս խայտառութիւնը ինձ հասցնել... Ի՞նչ պիտի ասեն էգուց գիւղացիք, հը... «Սոված-Սերոբը Մանուկ-աղային քարեց», հա. հա, հա...»։

Այդ դառը քրքիջը բերանին՝ Մանուկ-աղան մօտեցաւ սեղանին, մի բաժակ արաղ էլ գցեց ու կրկին շարունակեց իր մենախօսութիւնը.

«Զէ, չէ, Սոված-Սերոբ, հէնց որ ածերդ քիչ հասունացաւ ու քաղցած փորդ կուշտ հացի երես տեսաւ, դու էլ արդէն չափդ կորցրիր, խելքդ թոցրիր»։

Նա մի բոպէ կանգ առաւ սենեակի մէջտեղում ու ձեռը ճակատին դրած խոր մտածունքի մէջ ընկաւ։ Այդ վայրկեանին նրա դլխում հրէշային ծրագիրներ էին կազմակերպւում։

«Նատ լաւ», — յանկարձ բացականչեց նա ամուկ ծափ տալով ու սատանայական հրճուանքով դէպի դռուը թռչելով։

— Կարօ, — բղաւեց նա կոկորդի բոլոր ոյժով։

— Համմէ, — լոռւեց ստորին յարկից ծառայի զիւ ձայնը, որին յաջորդեց փայտէ սանդուխների շտապ

թրըպթրըպոցը։ Մի քանի վայրկեանից յետոյ սենեակի դռան ամբողջ բարձրութեամբ ցցուեց Կարօի երկար հասակը։

—Ադա, —ասաց աղան, —էս րոպէխս որտեղ էլ որ լինի, կը գտնես ու ինձ մօտ կը բերես Զախալենց Սերգօփին. լսնեմ ես. գետնի տակին էլ որ լինի, պիտի գըտնես, հասկաննեմ ես, թէ չէ գլուխտ կը ջարդեմ։ Դէ, էլ մի կանգնիր, շուտ արա, թակր։ Այ, գետնին թըրեցի, մինչև թուքս ցամաքելը թէ որ չես եկել, հոգիդ կը հանեմ։

—Ազքիս վրայ, աղայ, —ասաց Կարօն ու «թռաւ»։

—Իսկ Մանուկը՝ դիւային ժպիտը ըրթունքներին մօտեցաւ կոր սեղանին, մի բաժակ արազ էլ կոնծեց ու ձեռները տրորելով շարունակեց խօսել.

«Դու դեռ ինձ չէիր ճանաչում, Սոված-Սերոր, այ ես քեզ կը ճանաչացնեմ. ես քեզ ցոյց կը տամ, թէ Մանուկ-աղային բարելը ինչ է նշանակում։ Շատ չի բաշիր, հէնց էգուց առաւօտ լաշակեր շան պէս կը փոշմանես քո արածդ...»։

Սանդուիներից բարձրացող ոտնաձայները ընդհատեցին Մանուկի մենախօսութիւնը և նա շտապով դուրս վազեց պատշգամբը։

—Հը, գտար, —անհամբերութեամբ հարցրեց Մանուկը ծառային, որի գլուխը դեռ նոր էր երեսում սանդուխների վրայից։

—Գտայ, աղայ, հրէս հետո բերել եմ, —պատասխանեց Կարօն ցոյց տալով իրան հետեղ երիտասարդի վրայ։

—Դէ լաւ, ապրիս. թող Սերգօն էստեղ մնայ, իսկ դու քո բանիդ գնա, —հրամայեց աղան Կարօին ու ձեռը երիտասարդի ուսին դնելով, տարաւ սենեակը։

Զախալենց Սերգօն մօտ երեսուն տարեկան մի կարճահասակ ու լայնաթիկունք տղամարդ էր, որի կը լոր գէմքը զարդարուած էր երկու խոշոր սպիներով։ Նրա խիտ յօնքերի տակ պլազացող կապուտակ աշբերից

սաստիկ չարութիւն ու անզուսպ անիրաւութիւն էր կաթկաթում:

—Դիտես ինչ կայ, Սերգօ ջան,—կիսաձայն ասաց Մանուկ աղան, սենեակի դուռը ամուր փակելով ու ձեռը խօսակցի ուսին դնելով:

—Ի՞նչ պիտի լինի. կամ դէղ կայ՝ կրակելու, կամ այդի՝ կնդելու, կամ մարագ՝ վառելու, կամ, վերջապէս, տուն կայ քանդելու,—պատասխանեց Սերգօն, ձեռները գոտիին խրելով ու իր պլալան աչքերը օճորքին ուղղելով:

—Այ սատանայ. տես ինչ ձեսաց գլխի ընկաւ,—Ժպտալով ասաց Մանուկը, Սերգօի մէջքին կամացուկ խփելով:—Հա, դէ լսիր, թէ ինչ եմ ասում,—շարունակեց աղան, դէմքը սաստիկ լրջացնելով ու ձայնը աւելի ցածրացնելով:—Սոված-Սերոբի ածերը տեսած կը լինես, չէ:

Որպէս պատասխան առաջարկուած հարցին, Սերգօն հեգնօրէն ժպտաց, որով ուզում էր հասկացնել, թէ այդպիսի միամիտ հարցը շատ անպատուաբեր է իր համար: Ո՞վ չը դիտէ, որ Զախարենց Ակոբի տղէն իր հինգ մատի պէս է ճանաչում դիւղի բոլոր այդիները և աչքերը խուփ էլ կը դանի նրանց մէջ եղած լաւ տեսակի խաղողներն ու ամենաընտիր ծառապտուղները:

—Քանի տախտակից է, —շարունակեց աղան առաջուայ լրջութեամբ:

—Զորա: Բայց ինչ այդի է, շան-որդու ածերը, ասենք, սուս չը կայ, ամեն մի թուփը մի հատ հարիւրանոց արժէ, —պատասխանեց Սերգօն էլի աչքերը առաստաղին սեպելով:

—Տես ինչ եմ ասում, Սերգօ, —լոպէական լոռութիւնից յետոյ սկսեց մանուկ աղան, —էս դիշեր մի երեք հատ լաւ տղայ կը դանես, մի-մի սուր էտոց^{*)} կը

^{*)} Կտողը մեծ ու կեռ դանակ է, որը սովորաբար դորձ են ածում ալգեպանները.

տաս ձեռքները ու Սոված-Սերոբի ածերը էնպէս կնդել կը տաս, որ չորս տախտակիցը մի հատ կուտրակ էլ կանաչ չը մնայ:

—Վայ, դու սիսալ ես, աղայ, կնդելը լաւ չէ, կընդածը շուտով նոր ճիւղեր կը տայ: Կ'ուզես էնպէս արմատահան անեմ, որ փարթամ այգու տեղը էդուց-էլօր բոխկ ցանեն, —հրէշային չարախնդութեամբ վրայ բերեց Սերգօն, իր կապուտ աչքերը աղայի ճակատին յառելով ու այնպիսի ոգեսորութեամբ չուխի թերերը յետ ծալելով, որ կ'ասես հէնց այդ վայրկեանին նապատրաստում է սկսելու իր աւերիչ գործողութիւնը:

Որբան էլ Մանուկ-աղան քարասիրտ էր, որբան էլ նա սովոր էր անտարբերութեամբ նայել իր վաշխառուական ճիրաններում թրպրտացող արիւնաքամ զոհերին, այնուամենայնիւ նա մի տեսակ սառսուռ զգաց Սերգօի այդ դիւային ոգեսորութեան առջե:

Թէև երկու խօսակիցներն էլ համահաւասար չարէին, երկուսն էլ արենխում ու տնաքանդ, բայց և այնպէս տարբեր էր նրանց չարութեան նպատակը: Մէկը մղկտացնում, լացայնում, հոդի էր հանում՝ զրւոշահագիտական, կամ երբեմն էլ վրիժառական նպատակով, իսկ միւսը ուրախութեամբ քանդում, աւերում, տակին ու վրայ էր անում ամեն մի լաւ բան, որովհետեւ այդ դժոխային գործողութիւնը բոպէական հաճոյք էր պատճառում նրա սրտին:

Ահա այս աննպատակ, կամ աւելի ճիշտը՝ անշահասէր չարութիւնն էր, որ սոսկում ազդեց Մանուկ-աղային. «Կ'ուզես էնպէս անեմ, որ այդ նորահաս այգու տեղը էդուց-էլօր բոխկ ցանեն», նորից հնչեց նրա ականջում Սերգօի վերջին հարցը, որին նա չը կարողացաւ իսկոյն և եթ պատասխանել:

Մանուկի ներսում վազուց ի վեր մեռած խիղճը այդ վայրկեանին շունչ առաւ:

Մի բոպէաշափ անորոշ դրութեան մէջ մնալուց յետոյ վերջապէս Մանուկ-աղան վճռականութեամբ

ձեռները թափահարեց ու կլոր սեղանին մօտենալով,
ջղային շտապողութեամբ երկու բաժակ արադ գցեց:
— Անուշ էլաւ, աղայ ջան,— վրայ բերեց Սերգօն,
ապա թեքերը նորից վեր բաշեց ու կոկորդը մաքրեց.

— Լաւ ասացիր, Սերգօ, շատ լաւ կը լինի,— խոր-
հըրդաւոր կիսածայնով փափսաց Մանուկը, խօսակցին
մօտենալով ու աջ ձեռը նրա ուսին գնելով,— արմա-
տահան կ'անես, չորս տախտակն էլ գլխեգլուխ. այն-
պէս կ'անես, որ էլ կանաչի նշան չերևայ. հասկացար.
թէ ծառեր էլ կայ, բոլորը բրդէք...

— Ասում ես բոխկատեղ շինեմ, հա. էս աչքիս
վրայ, — մեծ հաճոյքով պատավանեց Սերգօն, աջ ձե-
ռը կապուտակ աչքին գնելով:

— Էհ, շատ ապրիս, աչքդ վարդի վրայ. գէ որ
էդպէս է, առ մի թաս արադ տամ փորդ տաքացրու.
Գիտեմ աղիքներդ սառած կը լինին հիմա:

— Տներ, տներ, ոզորմի հօրդ հոգուն. վաղուց է,
որ կատիկս չեմ թրջել:

Մանուկ-աղան վերցրեց մի մեծ թէյի բաժակ, պոլն-
կէպոռւնկ լցրեց արազով ու մեկնեց Սերգօին. Վերջինս
առաւ բաժակն ու սկսեց բարեմալթել.

— Աղայ ջան, բո կենացը, ողջ մնաս, կեանքդ եր-
կար լինի. ինչքան ապրես, լաւ ապրես. միշտ աջողու-
թեան մէջ լինես—ջանդ՝ առողջ, սիրադ՝ ուրախ, ճա-
կատդ՝ բաց: Բարերար Աստուածը քեզ ողջ պահի ինձ
համար ու բո շուարը իմ գլխից անպակաս լինի.
Տէր, Դու էլ ամեն բրիստոնեայի բանն աջողաս—ասաց
ու բաժակը շրթունքներին մօտեցրեց:

Նա խմում էր մանր կումերով ու հանդարտ, աշ-
խատելով որքան կարելի է երկար պահել արադի թասը
շրթունքներին սեղմած: Վերջապէս նա դատարկ բա-
ժակը մեկնեց աղային ու աչքերը առաստաղին ուղղե-
լով սկսեց բեղերը սղալել:

— Հը՛, մէկ էլ կը խմես:

— Դու գիտես:

Երկրորդ բաժակն էլ գատարկուեց։
— Դէ բաւական է, էլ չեմ տալ, թէ չէ կը հար-
բես ու գործից յետ կընկնես։
— Ո՞վ հարթի, մէրը մեռնի՛ Սերգօի՛։
— Լաւ, լաւ, պարծենալու ժամանակ չի, առաւօտը
կիմանանք քո, տղամարդութիւնը։ Ենւտ արա, գիշերն
անցնում է։

— Բա տղերքանց համար ջուր ու մուր չես տալիս։
— Ի՞նչպէս չէ, Կարօին կանչիր։
Մի րոպէից յետոյ Կարօն իր երկար ու կորացած
հասակով կանգնած էր գուան չէմքում։
— Ադա, երկու չափ արազ, մի տկնոր գինի տուր
Սերգօին, թող վեր առնի տանի։

Աղայի հրամանը կատարուեց։ Սերգօի ընկերները
իսկոյն հաւաքուեցին, տարած գինին ու արազը կուշտ
ու կուռ խմեցին և էտոցներն առնելով, Սերոբենց ածերը
գնացին։ Չորս հոգի էին նրանք, չորսն էլ ուժեղ ու
երիտասարդ։

Այգին համնելով, նրանցից ամեն մէկը մի տախ-
տակի ծայրին կանգնեց, «Եա, սուրբ Կարապետ», կան-
չեց ու աւերմունքը սկսեց։

Գարնանային սքանչելի գիշերներից մէկն էր. եր-
կինքն աստղալի, երկիրը՝ ծաղկազարդ։ Օդը լցուած
էր գալար կանաչի անուշ բուրմունքով։ Լուս էր
ամեն ինչ, հանգիստ ու խաղաղ. և համատարած
խաղաղութեան մէջ լսում էր միայն մատաղ վազերի
թոյլ արմատների ցաւալի ողբը։ Զարքաշ գիւղացու-
դառը քրատինքով մնուած թուփերը գաժան ձեռների
վարժ շարժումներով մի ակնթարթում պոկում էին
հողից, ապա գլխատուած թռչունների պէ՛ օդում
թրպրտում և ընկնում նորից։

Այս բոլորը տեսնում էր բարետու երկինքը իր բիւ-
րաւոր փայլուն աշխիներով, տեսնում էր և անգթաբար
լուռւմ։ Միան ամաչկոտ սիրուն լուսինը աշխատում էր
իր արծաթափայլ դէմքը ծածկել շուրջը լողացող սպի-
թրպրտում

տակ ամպերի քօղով, որպէս զի ակամայ հանդիսաւես չը լինի ցածում կատարուող բարբարոսական աւերջութեանը:

V

Այդ չարաբախտ գիշերը Սերոբի վաստակած անդամներին քաղցր քունը մօտ չեկաւ: Տիսուր մոքերը պաշարել էին նրա թմբած դրուխը ու մի տեսակ վատ նախազգացում իր ճնշող ծանրութեամբ խեղդում էր նրան. թւում էր թէ այսօր բարձը շատ կոշտ է ու անկողինը վերին աստիճանի անյարմար: Նա անդադար շրջում էր այս ու այն կողքի վրայ, որպէս զի կարողանայ մի կերպ աւելի հանդիսա դրութիւն գտնել, բայց չէր աջողւում: Խեղճի կողքերի տակ կ'ասես փշեր լինէին ցցուած, որոնք անդադար ծակծկում էին մարմինը ու փախցնում քունը: Իսկ հէնց որ նա փորձում էր մի վայրկեանով աչքը խփել, զանազան ահռելի տեսիներ իրանց այլանդակ կերպարանքով պատկերանում էին նրա բորբոքուած երեակայութեան մէջ ու նա երկիւղից շտապով բանում էր իր ընահարամ՝ ուռած աչքերը:

Խրճիթում տիրող թանձր խաւարը այդ բոպէին չափանց անտանելի էր թւում Սերոբին: Նա զգուշութեամբ ելաւ անկողնուց, մթութեան մէջ շօշափելով դտաւ լուցկին ու վառեց սիւնին ամրացրած փոքրիկ լամպան, որի արձակած երկչոս շողերը պացան դէպի աղքատիկ խրճիթի անկիւնները: Յետոյ նա պառկեց, իզուր յուսալով, թէ հիմա արդէն աչքը կը կպչի: Նոյն անհանդասութիւնը տանջում էր նրան և նա նախանձում էր ամուսնուն, որ իր կողքին միւնոյն վերմակի տակ անուշ երազների մէջ էր ընկղմուած:

—Եղան, այ Եղան,—կանչեց Սերոբը, իր կնոջ կողքին թեթև հրեթով:

—Հը, ինչ կայ, —մի քիչ վախեցած հարցրեց Եղանը, իր ընաթաթախ ու աչքերը լայն բանալով:

— Ակի, հենց էնպէս... ասացի տեսնեմ քնած ես
թէ զարթուն,—ստեց Սերոբը:

— Դու ինչու չես քնում:

— Էնպէս, քունս չի տանում, սիրտս մի տեսակ
տիսուր է:

— Է՛հ, ընիր, ընիր, Աստուած սիրես,—ասաց Եղանը
ու երեսը կողակցից շրջելով շարունակեց իր անուշ
քունը:

— Եղանն, երեսդ էս կողմ արտ, տես ինչ եմ ա-
սում:

— Հը՛, ասա:

— Ասում եմ լաւ շարինք. չը պիտի քարէինք, պի-
տի տուած լինէինք:

— Այ մարդ, ամօթ է, հացդ երկաթ կը դառնայ.
ով է տեսել, որ տասներկու տարեկան անմեղ երեխայ-
ին՝ քառասուն տարեկան որբեայրի տղամարդի տան...
Թաղեմ նրա թեկունքը, երկուսի գլուխը կերաւ, չը
կշացաւ, գեռ էլի ազապ աղջիկ է ուզում, — տաքացած
վրայ տուեց Եղանը:

Սերոբը ոչինչ չը պատասխանեց, այլ ճակատը շփեց
ու մի թեթև հոգեց արձակեց:

— Ես գիտեմ; դու նրա անունովն ես խաբւում,—
շարունակեց կինը, աւելի տաքանալով: — Մի տեսնէիր
երեխանը խեղճ երեխաս ինչ էր անում. քիչ էր մնում
սիրտը բերնովը դուրս դար. սիւնի շուաքում կծկուած՝
գոգով արտասուը էր թափում: Զիգարիս ծէրը փո-
րումն մղկտում էր, երբ մտիկ էի տալիս երեխուս աշ-
քերին... Կամ թէ չէ ինչու եմ վռազում. փառք Աստ-
ծու, աղջիկս ուրիշների պէս չի պառաւել՝ տանը մնացել.
Էս տարի չեմ մարդու տալ, կը պահեմ եկող տարի կը
տամ: մի կտոր հացը հօ գլխիցս չի կտրուել...

Տիրեց ըոպէական լուսթիւն:

— Չէ, Եղան, ես փոշմանել եմ. խաչը վկայ, փոշ-
մանել եմ: — Երկար մտածելուց յետոյ՝ ասաց Սերոբը:

— Դէ լաւ, որ էդպէս է, էգուց աղջկանդ կռնից

բռնիր ու տար Մուխասնց Մանուկի տունը կոխիր,—
անզօր զայրոյթով ասաց Եղանը ու նորից դժգոհու-
թեամբ երեսը դէպի պատը շրջեց:

—Իմ ասածո դու չես հասկանում, այ ինիկ. ինձ
փոշմանեցնողը ոչ Մանուկի հարստութիւնն է և ոչ նրա
աղայութիւնը, այլ իմ սրտիս երկիւղը... գիտես, անի-
րաւ ու անխիղճ մարդիկ շատ կան աշխարհում. ինչ չա-
րութիւն ասես, որ չանեն, ինչ վնաս ասես, որ չը տան
մարդու...

Այդ վայրկեանին երկու ամուսինները միաժամա-
նակ մոտերեցին, թէ ինչպէս մի քանի օր առաջ չար
ձեռով գցած կրակը ագահաբար լափում էր իրանց հա-
րեանի խոտի դէղը. յետոյ նրանց մոքում պատկերա-
ցաւ կոտորատուած ծառերի ու արմատահան արած վազ-
ների մի երկար շրբ, որոնք բոլորը նենգամիտ թշնա-
միների ստոր վրէժինդրութեան արդիւնք էին:

—Բա՛, անիրաւութիւնն աշխարհը պատել է, —շա-
րունակեց Սերոբը, —ամեն տեսակ չարութիւն, ամեն
տեսակ անաստուածութիւն կարող են անել. ով է նրանց
կուռը բոնողը...

Եւ Սերոբի լեզուն չէր զօրում արտասանելու այն
սարսափելի գործողութեան անունը, որ այդպէս ան-
գիմագրելի երկիւղ էր ազգում նրա սրտին ու ալեկո-
ծում հոգին: Ասենք պարզ ասելու կարիք էլ չը կար,
քանի որ Եղանը լաւ էր հասկանում, որ ածերն է ա-
մուսնու մտահոգութեան առարկան:

—Է՞հ, մեր Աստուածը ողորմած է, այ մարդ, Նա
չարը կը խափանի. Նա մի տուն կաթնակեր երեխա-
ները ջուրը չի լցնի. Քնիր, քնիր, էղպէս վատ վատ
բաներ մի մտածիր:

Եւ միամիտ Եղանը յոյսը դնելով Աստուածոյ ողոր-
մածութեան վրայ, ինչ որ պառաւական ալօթքի մի
քանի աղաւաղած բառեր մրմնջաց ու հանգիստ սրտով
քնեց: Նրա ամուսինն էր, որ մինչև արլորականչ չար-
չարուեց իր կոշտ անկողնում տխուր մտքերի խեղդող

ծանրութեան տակ ու ամենակին կոսկը կոպին չը կպցրեց:

Բարիլոյսը դեռ նոր էր բացւում, որ Սերոբը շտաւ պով շորերը ճիշտ գցեց ու մտաւ գոմը տաւարին ակը տալու Յետոյ նա դուրս եկաւ փողոց, առուի ջրով լուացուեց, չուխի փէշով երեսը սրբեց ու կրծքին խաչ հանելով խրճիթը մտաւ, եղանակ ու իր մեծ աղջիկը՝ Խաթօն, արդէն ոտի վրայ էին: Սերոբը անխօս՝ օրուայ պաշարը մէջը կապեց, բահն ուսեց ու դէպի ածերը դիմեց:

Նրա գլուխով թմրած էր, քներակները տաքացած ու ամբողջ մարմինը ջարդուած, թուլացած: Ոչ ճանապարհի կողքերին շարուած ծառերի ծաղկազարդ տեսը, ոչ կարկաչահոս առուի անուշիկ երգը, ոչ նրա եզերի դալար կանաչը, ոչ այգիների ափերում; արևկող զառիւ վայրերում կուչուրած մանուշակի նորաբաց ծաղիկները և ոչ նրանց արձակած եղեմային բուրմունքը—ոչինչ չէր գրաւում նրա ուշադրութիւնը և նա շտապում էր ու արտասովոր լայն քայլերով անընդհատ առաջանում:

Ահա Սերոբը մօտեցաւ ճանապարհի այն ոլորանին, որտեղից սովորաբար առաջին անգամ տեսնում էր ածերի գլխի ծառերի շարքը: Նա պտառւեց ոլորանը ու անմիջապէս աչքերը ուղղեց դէպի իրանց այգին: Բայց ինչ... ծառերը չեն երեւում: չի երեւում մինչև անգամ բարձրահասակ խնձորենու ծաղկազարդ գլուխը: Տէր Աստուած, այս ինչ հրաշք է: Սերոբը մեքենայաբար վաղեց կողքի այգին ու լերդապատառ վռազութեամբ բարձրացաւ այնտեղ կանգնած մեծ քարակոյտի վերի կատարը: Նայում է ու իր աչքերին չի հաւատում: Նա տրորում է կարմրատակած աչքերը, շփում է տաքացած ճակատը ու նորից նայում: Այս ինչ բան է, Տէր Աստուած... մատաղահաս ծառերի ծաղկապատ գլուխները կռացել, գետնին են կպել, այն, իսկը գետնին, նրա լայն չուած աչքերը շատ լաւ տեսնում են այդ բանը:

Այսուհետև Սերոբը ինքն էլ չիմացաւ, թէ ինչպէս
այդին հասաւ:

Ահա վերջապէս նա անխօս կանգնած է ածերի
գլխի ափում և շուարած հայեացըով առջեն է նայում:
Նա ոյժ չունի առաջ գնալու. ծնկները ծալուել, ոտները
թուլացել են... ափի կանաչ ծածկոցի վրայ խառնի-
խուռն թափթփուած էին պտղատու ծառերի մատաղ
գագաթները. իսկ գլխատուած ծառերի տեղ կարգով
շարուած էին երկար ու կարճ բենչերի *) սուր սուր
ծայրերը, որոնք թունաւոր նետի պէս խոցոսում էին
Սերոբի սիրաց: Եւ ինչպէս չը ցաւէր խեղճի սիրաց.
ախր ամբողջ ութ տարի նա հալ ու մաշ էր եղել այդ
ծառերի շուրջը. նրանց քնքոյշ արմատների համար շա-
լակով ազր էր կրել, շատ անգամ կժով էր ջրել. գու-
գերով քրտինք էր թափել, մինչեւ որ մեծացրել, պատ-
ուաստել ու բերել պտղի էր հասցրել: Իսկ հիմա...

Այս, երանի գրանով ամեն բան վերջանար:

Իայց ահա թմբերի վրայ ու նրանց մէջերում ան-
կանոն փռուած են արմատահան արած վազների փար,
թամ կուտրակները: Այ, այն մէկը իծապտուին է, որ
օտար թմբի կրծքին սեղմուած՝ խոնաւ արմատները
դէպի վեր է բարձրացրել. այս էլ եղնացքն է, մէջտե-
ղից ջարդուած, միջնակում **) ընկած. Էն էլ ասկեարին,
էն էլ հալաղին, էն էլ քիշմիշին—բոլորն էլ ջարդուած,
արմատով հանուած, հարազատ հողից հեռու շպր-
տուած...

Սերոբը կանգնած տեղում բարացել էր: Նա գի-
տում էր այս տեսարանը և նրա կարկամած լեզուն
անդադար կրկնուող «վայ» բացականչութիւնով էր միայն
արտայայտում սրտում ծովացած վիշտը:

Վերջապէս նա գլուխը բարձրացրեց: Դեռ արև չը

*) ԲԵՆՀ—ՊԵՀԾԿԵ.

**) Ալզու տախտակները իրարից բաժանող անցքը անուանում է
միջնակ:

կարք Անամակ երկնքի բաց կապտութեան մէջ մեղմիկ փայլում էր պառաւած լուսնի դէմքը:

—Անիրան, սահ էր քո արդար դատաստանը, քո ողորմածութիւնը, —բացականչեց Սերոբը ատամնելը կրծտացնելով ու թունալից հայեացը դէպի վեր ուղղելով:

Կարծես նրա հայեացը էր որ երկնքն այլայլուեց, լուսինը կարծես ամօթից էր որ իր փայլը կորցրեց, դողաց, գունատուեց: Ծերուկ Մասիսի բարձր կատարը փոքր ինչ դեզնեց:

Այսուհետեւ Սերոբը արձակեց իր երկայն դօտին, հանդարտորէն ափում մեկնեց ու սկսեց դարսել նրա վրայ մատաղ տունկերի խեղճուկ մասերը. նա առաջ ուշ դեց բուրը հաւաքել, բայց տեսնելով, որ այդ բանը իր ոյժերից վեր կը լինի, ջոկեց ընտիրները գլխատուած ծառերից, նրա վրայ աւելացրեց փարթամները կուտրակներից. այս բոլորը ամուր կապեց, շալակն առաւ ու տուն դիմեց:

Հէնց այդ բոպէին նորածին արևն իր վառ շողերով լուսաւորեց Սերոբի թախծապատ դէմքը ու իր ոսկեփայլ շրթունքներով համբուրեց, լիզեց նրա շալակի դալար ծառերի խոնաւ վէրքերը:

—Կորիր, ասաց Սերոբը աչքերը արևից թագցնելով, —այսուհետեւ խաւալիր ինձ համար, շեմ ուզում քո լոյսը:

Սգաւորի սև սրտին՝ կարմիր արև չի սագի:

Սերոբը իր թանկագին բեռը շալակին՝ հանդարտ քայլերով առաջ էր գնում, մեղմ օրօրուելով: Ճանապարհին նրան հանդիպող դիւղացիները կիսաքերան բարիոյ էին տալիս, յետոյ կանդ առնում, շալակին նայում, մի բանի կարեկցական բացականչութիւններ արձակում ու ցաւալի դէպի ախուր մանրամասնութեամբ հետաքրքրում:

Սերոբը կ'ասես ոչինչ չէր լսում ու չէր էլ զգում: Դեկտեմբեր, 1901.

Նա շարունակում էր ճամբան առանց կանգնելու, առանց որ և է մէկին պատասխանելու, ոռւս ու փուս, ինքն իր անյատակ վշտի մէջ թաղուած:

Գիւղամիջի մարդաշատ հրապարակը հասնելով, նա կանգ առաւ, շալակի բեռը զգուշութեամբ գետին դրեց ու ճակատի սառը քրտինը չուփի փէշով սրբեց:

Հրապարակի շուրջը շարուած էին գիւղի նշանաւոր խանութներն ու ամենալաւ շինութիւնները, որոնց մէջ միանգամայն աչքի էր ընկնում. Մանուկ աղայի սրբատաշ կարմիր քարէ երկյարկանի բարձր տունը՝ իր նորածեւ սիրուն լուսամուտներով ու գեղեցիկ պատշգամբ բով:

Մի ըոպէում գժբախտ Սերոբին իր խղճուկ բեռով շրջապատեցին աղքատ գիւղացիք մռայլ ճակատով, արևոր գէմքով ու կոշտ ձեռներով, որոնց կրակուած շրթունքներից գուրս թուշող ցաւակցական բացականչութիւնները իրար խառնուելով մի խմբովին աղեկառու ողբ կազմեցին:

Առաւօտաժամը վերջացաւ, և ալեոր ծերուկների կորացած մարմինները երերուն քայլուածքով հրապարակ հասան ու անհետացան սգող ամբոխի ստուար շարքերում: Վերջապէս, ժամի ծուռտիկ փողոցից դուրս եկան երկու ծերունի ևս ու բաղցրութեամբ զրուցելով, հրապարակին մօտեցան: Քեռի Գոգորն էր, մէկ էլ տէրտէրը:

—Ճամբայ տուէք, ճամբայ բացէք,—լսուեցին մի քանի խեղդուած ձայներ:

Ամբոխը ծեղքուեց, և պատկառելի ծերուկների աշշերի առջև պատկերացան բարբարոսական անգթութեան ողորմելի զոհերը: Մատաղ ժառերի ժաղկապատ գլուխները և առողջ վաղերի հաստիկ կուտրակները անկարգօրէն թափուած էին շրջանի կենտրոնում, հող ու փոշու մէջ: Իսկ Սերոբը—ծեռը խաչած, շինքը ծուռ, գէմքը գունատ կանգնած էր լուռ: Ոչ աղաղակ, ոչ մի անէծք, ոչ արտասուը...

— Օֆ—օֆ,—մրմնջաց քեռի Գոգորը առաջ անցանելով, — էս ինչ բան էր բըւոր որդի, էս ինչ կրակ ու պատիժ էր, օֆ—օֆ—օֆ—օֆ: — Եւ նա իր ոսկրացած մատներով սկսեց շօշափել մեռած բոյսերի թարմ վէրքերը:

— Եյ ժողովուրդ, — սկսեց տէրտէրը դիմելով աճ բոխին, էս ինչ անաստուածութիւն է, որ դուք էք անում: Ինչ անիրաւութիւն, ինչ կուազաշութիւն է սա. Ինչու էք իրար տուն քանդում, իրար միս ուտում... բաւական չեղաւ... էս քանդուած դիւզը Սոդոմ Գոմորը դարձրիք. ախր երկնային կրակից վախեցէք: Զէ որ վերև Աստուած կայ, չէ որ այնտեղ արդար դատասաւան կայ, — վերջացրեց նա, դողդոջիւն մատը դէպի երկինք ուղղելով:

— Հա, տէրտէր ջան, կայ, վերև Աստուած կայ, արդար դատասաւան էլ կայ, — բացականչեց Սերոբը, դժի պէս յանկարծակի վեր թռչելով:

Խեղճ ծերունին մի վայրկեան շփոթուեց Սերոբի անսպասելի հարցից, բայց յետոյ իր ձիւնափայլ մօրուքը շփելով, մեղմութեամբ պատասխանեց.

— Մեղք է, որդիս, էդպէս բաներ մի հարցնիր. դա Աստծուն դէմ կը դայ:

«Մեղայ Աստծու, մեղայ, Տէր», լսուեցին ամբոխի հետ խառնուած բարեպաշտ ծերուկների ջերմեռանդ շրթունքներից:

— Զէ, տէրտէր ջան, աջիդ մեռնեմ, ասա տեսնեմ՝ ուղիղ է, որ վերկում արդար Աստուած կայ:

— Հանգստացիր, որդի, մի վրդովուիր. կայ, այո, կայ, և նա կը պատժի չար մարդին, կրակ կը թափի անիրաւի դլխին:

— Հա, դէ որ էդպէս է, թող էս ըոպէիս էն բարաշէն մեծ առւնը աչքիս առաջին վլչի, — բղաւեց Սերոբը, ցուցամատով Մուխսոնց տունը նշանց տալով. — Թող նրա հիմն արեգակին դառնայ... դու խնդրիր,

տէրտէր ջան, դու բարեխօսիր երկնքի առջև, որ Գար-
րիկը հրեշտակի հրեղէն սուրը ներս մտնի այն կարմիր
շէմքից. թող Սոդոմ Գոմորի կրակը լափէ այն ահագին
շինութիւնը... Տեսնում ես պատշգամբում կանգնածին,
այն կռապաշտի զաւակն է էս բոլորի պատճառը, էն
սատանի ծնունդն է իմ տուն բանդողը, հասկացաք...
Դէ աղաչիր, տէրտէր ջան, քո արդար բերանովդ խընդ-
րիր, որ կործանուի այն բարձր տունը իր մեծ խանութ-
ներով, որ բոցերի մէջ պլազայ այն սիրուն պատշգամբը
իր վրայի նենդ օձով... Դու էլ բարեխօսիր, բեռի Գո-
գոր, դու սատուածագիս մարդ ես. դուք էլ աղաչե-
ցէք, այ ժողովուրդ, այ գիւղացիք, այ ախպերտինը,
Աստուած սիրողը թող մի մի բերան խնդրէ, դուցէ մէ-
կիդ արդար ձայնը լսելի լինի երկնքին...

ՍԵՐՈԲԸ ԼՐԵՑ:

Ունկնդիրների խոնարհուած գլուխները բարձրա-
ցան ու հարիւրաւոր աչքերի յանդիմնական հայեցը-
ները ուղղուեցին Մուխսոնց սպիտակ պատշգամբին:

Մանուկ աղան, որ ձախ ձեռը կողքին կանթած՝
աջով ոլսում էր երկայն բեղերը, յանկարծ կարմրա-
տակեց, կրնդի վրայ պտառեց ու պոօշները կրծոտելով
արագութեամբ տուն մտաւ:

Մի զսպուած շշուկ մեղմ ալիքներով հանդարտ բո-
լորուեց ամոխի կազմած շրջապատովք:

Երկու բոլէ չանցած՝ Մուխսոնց տան կամարա-
պատ գարբասով դուրս թռաւ Մանուկը, որին հետեւ-
ցին երկու բարձրահասակ տղամարդ հաստագլուխ մա-
հակները ձեռներին:

—Գլուխը օձի գլխի պէս կը ջարդէք, —բղաւեց
աղան, ինքը հեռու կանգնելով, —կը տրորէք, ոտներիդ
տակ աղցան կը շինէք, կը սատկացնէք սոված շան-
որդուն:

Սկսուեց մի աննկարագրելի իրարանցում: Մահակ-
ների անողորմ հարուածները, Սերոբի սրտակտուր

աղաղակը, քեռի Գոգորի հոգեմաշ «օֆ»-երը, տէրտէրի սարսափելի սպառնալիքները և Մանուկ աղայի լպերը հայհոյանքները թանձր փոշու մէջ իրար խառնուելով, մի գժոխային համերդ էին կազմում, որի աններդաշնակ հնչիւնները փոշու ամպի հետ քուլա-քուլա բարձրանալով՝ անհետանում էին երկնային անսահման կապտութեան մէջ։

Ա. ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆ